

279  
թ Ի Ի 29—30

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ  
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ 1911—12 ՇՐՋԱՆԻ

ԵՐԵՎԱՆԻ ԱԿԱԴՄԻԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵՆԷՆ ԵՏՔԸ

ՆԻՍՏ ԻԹ.—Լ.

16 Մարտ, — 13 Ապրիլ, 1912



Տպագրութիւն Տ. ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆ  
Կ. ՊՈԼԻՍ, Պապր-Ալի ձառուխի, Թիւ. 49

1912

39

# ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

## ԲԱՑՈՒՄ 1911 - 1912 ՆՍԱՇՐՋԱՆԻ

### ՆԻՍ ԻԹ.

16 ՄԱՐՏ 1912

Ն Ա Խ Ա Գ Ա Ղ . — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՐ

Ա Տ Ե Ն Ա Պ Ե Տ . — ՀՐԱՆՏ ԷՖԷՆՏԻ ԱՍՏՏՈՒՐ

### ՕՐԱԿԱՐԳ

1. — Մեծամասնության խնդիր :
2. — Տեղեկագիր Ասենապետաց Դիւանի ի մասին Երուսաղէմի Պատրիարքական ընտրության :
3. — Ընտրութիւն խորհրդարանական յանձնաժողովոյ, Լռէցեան Ա.ի մասին կատարելի քննության :
4. — Տեղեկագիր Ասենապետաց Դիւանի ի մասին Օրմանեան Ա.ի ամբաստանությանց :
5. — Տեղեկագիր Ասենապետաց Դիւանի, ի մասին Թրքահայոց կողմէ Ամենայն Հայոց Հայրապետության մատուցանելի գրին :
6. — Խնդիր Եուանէսուի :

(Ատեանը բացուեցաւ ի ներկայութեան 60 Երեսփոխանաց, որոց թիւը յետոյ յանգեցաւ 67ի) :

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԻՔ

կայ են արդէն, հետեւաբար ատեանը բացուած է : Տ. Հմայեակ Ս. եւ Մկրտիչ Էֆ. Մելիքեան բանաւոր պատճառով այսօրուան նիստէն իրենց բացակայութիւնը հաղորդած են, կ'արձանագրենք զիրենք օրինաւոր բացակայ :

ԲԱՅԱԿԱՅՈՒԹԻՒՆ ԵՐԵՍՓՈՒԱՆԱՅ

ՎԱԻԵՐԱՅՈՒՄՆ ԵՐԵՍՓՈՒԱՆԱՅ

ԱՏԵՆ. ԷՖ. — 60 Երեսփոխաններ ներ-

ԱՏԵՆ. ԷՖ. — Համագումար ժողովը



մէկ եկեղեցական երեսփոխանի ընտրութիւնը կատարած եւ Ս. Պատրիարքին կողմէ արդիւնքը տեղեկագրուած է. ձեր վաւերացման կ'ենթարկուի :

(Ատենադպիր էֆ. կարգաց հետեւեալ գիրը :

Վսեմաշուք Ատենապետ էֆ.

Ազգ. Երեսփ. Պատկ. Ժողովոյ

Տարուայ Մարտ 15ին, հինգշաբթի օր վերստին հրաւիրուեցաւ Եկեղ. Ընդհ. Ժողովը ի նիստ, կատարելու համար մէկ եկեղեցական երեսփոխանի ընտրութիւնը համեմատականի մնացած երկպատիկ ցանկէն :

118 հրաւիրեալներէն 53ը նամակաւ եւ 6ը անձամբ մասնակցեցան քուէարկութեան, որոցմէ մին ձեռնպահ մնաց : Արդիւնքը եղաւ .

Տ. Վահրամ Ս. Մանկունի 34 քուէ

Տ. Սահակ Վ. Օտապաշեան 25 »

Ըստ այսմ Տ. Վահրամ Սրբազան Մանկունի ազգային եկեղեցական երեսփոխան ընտրուած է :

Ընդ գրոյս կցելով Քննիչ Մասնախումբին տեղեկագիրը, եւ անոր մէջ պարունակուած քուէներէն ոմանց մասին տրուած ծանօթութիւնը ներկայելով Պատկ. Ժողովոյ :

Մնամ աղօթարար

Պատրիարք Կ. Պոլսոյ

Յովհ. Արեւսպ. Արքայունի

16 Մարտ 1912

Բարձրաշնորհ Ս. Հայր :

Ազգ. Երեսփ. Ժողովոյ հրահանգին եւ Ձեր Ամենապատուութեան հրամանին համաձայն Եկեղեց. Ընդհ. Ժողովը այսօր ի նիստ գումարուեցաւ ժամը 1 1/2ին, Պատրիարքարանի մէջ, նախագահութեամբ

Ձեր Բարձր Սրբազնութեան եւ Կրօն. Ժողովի կողմէ կարգեալ մասնախումբի հրահանգութեամբ ընտրելու համար մէկ եկեղեցական երեսփոխան Տ. Տիրայր Մ. Վարդապետի տեղ :

1911 Դեկտեմբեր 1ի հինգշաբթի օրուան կատարուած քուէարկութենէն համեմատականի մնացած երկանուն ցանկին վրայէն պիտի կատարուէր ընտրութիւնը :

1. - Տ. Սահակ Մ. Վրդ. Օտապաշեան 14 քուէ : 2. - Տ. Վահրամ Ս. Սրբեպս. Մանկունի 11 քուէ շահած էին առջի ընտրութեան մէջ :

Հրաւիրեալ էին 118 եկեղեցականներ, որոցմէ մին ձեռնպահ մնալով վեցն անձամբ մասնակցած, իսկ 53ը նամակաւ յղած էին իրենց քուէները : Քուէահամարն ըստ օրինի կատարուեցաւ արձանագրողներու եւ հսկողներու միջոցաւ, արդիւնքն եղաւ 59 քուէ :

Քուէարկութեան արդիւնքն եղաւ հետեւեալը

Տ. Վահրամ Սրբազան 34 քուէ, իսկ

Տ. Սահակ Մ. Վրդ. 25 քուէ շահած էին որով Մանկունի Սրբազան ընտրուած էր Ազգ. Երեսփոխան :

Այս առթիւ հարկ կը դառնա հետեւեալ պարագաներն եւս ներկայացնել Ձեր Ամենապատուութեան ուշադրութեանը :

Հրաւիրագրերու ուղարկումէն առաջ անցեալ տարւոյ Դեկտեմբերի սկիզբները 22 քուէներ հասած էին Տեղապահ Մանկունի Սրբազանի հասցէին, եւ զոր, պահարաններու վրայ փակցուած թուղթով մը, փոխանակած էր Ամեն. Ս. Պատրիարք Հօր հասցէին : Եւ նոյն քուէարկուներէ եօթն ընտրութեան հրաւիրագրերը ընդունելէն յետոյ ուղարկած էին վերստին նոր քուէներ : Հին եւ նոր 14 քուէներն իրարու հետ բաղդատելով երեսան եկաւ թէ ասոնցմէ հինգն իրարու հակասական էին իրենց պարունակու-

թեամբը, այսինքն նախապէս իրենց քուէները տուած էին Տ. Վահրամ Եպիսկոպոսի, իսկ երկրորդ անգամին կեդրոնացուցած էին իրենց քուէները Տ. Սահակ Մ. Վարդապետի վրայ :

Չայս հաղորդելով Ձեր Բ. Սրբազնութեան մնամք որդիական համարելու :

Անդամք Քննիչ Մասնախումբի Ղեւնդ Մ. Վրդ. Դուրեան Եղիշե Մ. Վրդ. Գալֆաեան Երուանդ Վրդ.

Գեորգ Քննչ. Անանեան

16 Մարտ 1912

ԱՏԵՆ. ԷՖ. — Ընտրական տեղեկագրին մէջ յիշատակուած է որ նախապէս դրկուած 22 քուէները, քուէահամարի գործողութեան յետագման պատճառաւ այս երկրորդ քուէարկութեան առեւ նկատողութեան առնուած են, այս մասին եթէ ո եւ է դիտողութիւն չունինք, ձեր քուէին կ'ենթարկեմ կատարուած ընտրութիւնը :

Ա. ԳՍԱՊԱՐԵՍՆ ԷՖ. — Այդ 22 քուէները տուող եկեղեցականներէ 15ը երկրորդ անգամ քուէ չեն դրկած, բայց նոյն իսկ եթէ երկրորդ քուէարկութեան մասնակցած ըլլային, առաջին քուէները իրենց արժէքը չէին կորսնցնէր, քանի որ իբրեւ քուէ պահուած էին :

(Ատենապետ էֆ. քուէի ենթարկելով սոյն ընտրութիւնը, Ժողովը վաւերացուց զայն եւ Ատենապետ էֆ. եկեղեցական երեսփոխան հռչակեց Տ. Վահրամ Սրբեպս. Մանկունի) :

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆԱՅ

ԱՏԵՆ. ԷՖ. — Մեր պաշտօնակիցներէն երկուքը, Ազգ. Երեսփոխաններու ընտրութիւնները ամբողջացնելու մասին առաջարկ մը ունին, կը յանձնեմ ձեր ուշադրութեան :

(Ատենադպիր էֆ. կարգաց հետեւեալ գիրը) :

Վսեմաշուք Ատենապետ էֆէնտի

Ազգ. Ընդհ. Ժողովոյ

Արձանագրութեամբ կը ստուգուի թէ հետեւեալ երեսփոխանական աթոռները թափուր կը մնան ցարդ : Արդ ի նկատ ունենալով մեծամասնութիւն գոյանալու դժուարութիւնը, կ'առաջարկեմք յանձնարարել առ որ անկ է, որպէս զի ընտրութիւնները փութացուին :

Կ. Պոլսէն թափուր աթոռները

Եկեղեցական երեսփոխաններէ	2
Բերայի	3
Գուրուչէշմէի	1
Եէնի-Գարուի	2
Գոււմ-Գարուի	1
Կէտիք-Փաշայի	3
Նարլը-Գարուի	4
Գաւառներէն	—
Եւզոկիայի	1
Չմշկածակ-Չարսանձագի	1
Չմիւռնիոյ	1
Պրուսայի	1
Տիվրիկի	1
Ամասիա-Մարզուանի	4
Գաղատիոյ	1

Ընդհ. գումար 20

Ազգ. Երեսփոխանք

Ա. Յ. Գասպարեան Մ. Հայկազն

16 Մարտ 1912

ԱՏԵՆ. ԷՖ. — Տարակոյս չկայ որ այս առաջարկը իրաւացի խնդիր մը կը շօշափէ, սակայն դիւանս պարտք կը զգայ հաղորդել ի տեղեկութիւն թէ՛ այս գրին մէջ ցոյց տրուած վայրերուն մեծ մասին ընտրութիւններուն համար Քաղ. Ժողովէն արդէն հրահանգ տրուած եւ ընտրութիւններն ալ կատարուած են, կը մնան միայն 15 տեղ որուն համար պիտի գրուի Վարչութեան :

այս մասին պէտք եղածը գործադրելու համար : Այս կարգին մէջ երկար ատենէ ի վեր բացակայող երեսփոխաններ ալ կան ինչպէս Միրզա էֆ. Մսերեան եւ այլն զորոնք պէտք է հրաժարեալ նկատենք :

Ա. ԱԼՊՅԱՆՆԵՐ ԷՖ. — Ճիշդ է, երեսփոխաններ կան, որոնց երեսը տեսած չենք երկար ատենէ ի վեր եւ ասոնց Պոլիս գտնուելու մասին ալ տեղեկութիւն չունինք, ինչպէս Ղեւոնդ Մելոյեան եւ Արտաշէս Յովսէփեան էֆ.ները, պէտք է ասոնք հրաժարեալ նկատուին, որպէս զի անոնց անց նոր ընտրութիւն տեղի ունենայ :

Մ. ՀԱՅԿԱՍՅԱՆ ԷՖ. — Ես ալ համամիտ եմ ըստածներուն, երկար ատեն բացակայութիւն ունեցողները ոչ մէկ կերպով իրաւունք ունին երեսփոխան մնալու, բայց երբ կարգ մը պաշտօնակիցներ Պոլսէն բացակայ գտնուելով չեն կրնար ներկայ գտնուիլ, ուրիշներ Պոլիս բնակելով չեն գար, ինչպէս Բարսեղ էֆ. Աւետիսեան : Կեզրակացնեմ ըսելով որ զիւանը պէտք է դադարեցնէ այսպէս երկար բացակայութիւն ունեցող երեսփոխանները :

Հ. ԽՕՃԱՍՍՐԵԱՆ ԷՖ. — Այս վիճաբանութիւնը երկարելու պէտք չեմ տեսներ. զիւանք ներկայութեան տուածին ստուգելով, ամբողջ ցուցակը կրնար ներկայեցնէ երկար ժամանակէ ի վեր բացակայ գտնուող երեսփոխաններու, եւ ժողովս անմիջապէս կը գործադրէ պէտք եղածը :

Ա.ՏԵՆ. ԷՖ. — Դիւանս կը ստանձնէ պատրաստել այս ցուցակը եւ միւս կողմէ կը յանձնարարէ Վարչութեան, որպէս զի երեսփոխանական ընտրութիւն չկատարուած գաւառներուն ու թաղերուն անմիջապէս արուին հարկ եղած հրահանգները :

ՈՍՄ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՀԱՅ ԱՆԳՍՏՈՅ

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Ա.ՏԵՆ. ԷՖ. — Ազգային Վարչութիւնը պաշտօնապիւր մը ունի Օսմ. Խորհրդարանի հայ անդամոց ընտրական խնդրոյն նկատմամբ : Կը յանձնեմ ձեր ուշադրութեան :

(Ատենադպիր էֆ. կարգաց հետեւեալ գրքը) :

Վսեմաշուք ատենապետ էֆէնտի

Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողով

Պատկառելի ժողովոյ իր Յունւ. 28ի Իէ.րդ նստին մէջ լսելէ ետք Վարչութեան կողմէ արուած բացատրութիւնները՝ Օսմ. Խորհրդարանի անդամոց յառաջիկայ ընտրութեան գործին մէջ իր հետեւած ուղղութեան մասին, կը հաւանէր Վարչութեան անորէնութեանց եւ կը հրաւիրէր զայն շարունակել իր վերին հսկողութիւնը :

Քաղ. ժողովը այս յանձնարարութեան համաձայն չթերացաւ իր վերին հսկողութեան պարտականութիւնը կատարելէ եւ ըստ այնմ հարկ եղած խորհրդակցութիւնները պարբերաբար կատարեց Օսմանեան Խորհրդարանի հայ անդամոց ընտրութիւնները ազգին բաղձանաց համաձայն յաջողցնելու նպատակաւ կազմուած ընտրական յանձնաժողովոյ հետ՝ որու կը մասնակցէին ազգին զանազան կուսակցութեանց, խմբակցութեանց եւ յարանուանութեանց ներկայացուցիչները, Գարձեալ հարկ եղած հրահանգները տուած գաւառական առաջնորդաց եւ մայրաքաղաքի թաղ. Խորհրդոց, այս ընտրական գործին մէջ ազգայնոց ընտրական իրաւունքները յարգուելու, ապօրինութիւններ եւ ճնշումներ ի գործ չդրուելու եւ մասնաւոր հայոց թիւին համեմատութեամբ յարմարագոյն անձնաւորութեանց ընտրու-

թիւնը յաջողցնելու նպատակաւ : Բաց աստի Յանձնաժողովոյ աշխատութիւնները զիւրացնելու եւ հսկողութիւն կատարելու նպատակաւ Քաղ. ժողովոյ անդամներէն Չ—Յը միշտ անոր նիստերուն ներկայ գտնուեցան : Բայց ցաւօք կը յայտարարենք թէ հակառակ ամէն ջանադրութեանց, Յանձնաժողովոյ մէջ բաղձացուած համերաշխութիւնը չկրցաւ գոյանալ եւ յառաջ գալ սկիզբուած արդիւնքը : Ահա այս մասին Յանձնաժողովոյ Ատենապետին վերջին տեղեկագիրը :

Միւս կողմէ Պատկ. ժողովը իր վերջին նստին մէջ լսելէ յետոյ ընտրական պայքարի առթիւ եղած յայտարարութիւնները, Մարտ 15 թուականաւ գրով մը կը յանձնէր Վարչութեան նկատմամբ իր բանաձեւը :

Քաղ. ժողովը, ուշադրութեան առնելով նոյն բանաձեւն եւ ներկայացնելով իրաց տխուր վիճակը, կը հրաւիրէ Պատկ. ժողովի խորին ուշադրութիւնը սա պարագային վրայ թէ՛ ընտրական գործողութիւնները ամէն որեք շատ յառաջացած են, եւ եթէ այսուհետեւ ալ Յանձնաժողովոյ աշխատութեանց ապաւինինք, յուսախափ պիտի ըլլանք, եւ Օսմ. Խորհրդարանի մէջ չպիտի կրնանք ունենալ աւելին բաղձանաց համաձայն պահանջուած թիւով հայ անդամներ : Ուրեմն, կը պարտինք ուրիշ միջոցներու զիմել, որպէս զի ազգին շահերը ապահովուին :

Առ այս Քաղ. ժողովը կը կարծէ թէ՛ յարմարագոյն եղանակը պիտի ըլլայ որպէս զի հոյոց քուէները բազմաճղի չցրուին եւ արժանաւոր ընտրելիներու վրայ կեդրոնանան եւ այս կերպով բաղձացուած թուով հայ երեսփոխաններ կարենան ընտրուիլ, երբ Ազգ. ժողովոյ անդամները՝ որ համայն թրքահայոց ներկայացուցիչն ըլլալու հանգամանքը կը կրեն, անցեալ շրջանի նման՝ միանան անպաշտօն

կերպով, եւ կազմեն հայ ընտրելիներու ցուցակ մը Պոլսոյ եւ ի հարկին գաւառաց համար : Երբ այս ցուցակը պատրաստուի մեծամասնութեամբ, այնուհետեւ կրնանք զայն հրատարակել լրագրաց մէջ, հաղորդելով միանգամայն թաղ. Խորհրդոց եւ Գաւառական Առաջնորդութեանց, ինչպէս նաեւ յարմար դատուած միջոցներով ներկայացնել առ որ անկ է՝ ծանուցանելով թէ այս ցուցակին անուններն կը կազմեն ազգին ընտրելիները :

Մնամք յարգանք  
Ի դիմաց Քաղ. ժողովոյ  
Ատենապետ  
Գեորգ Ասլանեան

16 Մարտ 1912

(Կարդացուեցաւ նաև ընտրական յանձնաժողովին ատենապետ Գարսեան էֆ.ի տեղեկագիրը, որով տեղեկութիւններ հաղորդելով ընտրական խորհրդակցութեանց անհետեւանք մնալու մասին, կ'եզրակացնէր թէ խզուած են այդ խորհրդակցութիւնները) :

Ա.ՏԵՆ. ԷՖ. — Վարչութեան տեղեկատուութիւնը լսեցիք, այժմ ժողովս կարծիք պիտի յայտնէ այս խնդրին վրայ, բայց փափաքելի է որ երկու կողմէն թեք ու դէմ մէկ մէկ երեսփոխան խօսին : Ես կը կարծեմ թէ քանի որ այս խնդիրը պաշտօնապէս Ազգ. ժողովին աշխատութեանց հետ ուղղակի յարաբերութիւն չունի, ժողովը կարելի եղածին չափ քիչ զբաղելու է, այսու հանդերձ ամէն երեսփոխան կրնայ անհատապէս աշխատիլ : Այդ խօսքը Վարչութեան ատենապետինն է բերանացի ալ պէտք եղած բացատրութիւնը տալու համար :

Գ. ԱՍԼԱՆԵԱՆ ԷՖ. — Անցեալ օր հարցում եղած էր այս խնդրոյն նկատմամբ եւ բանաձեւ մըն ալ եկած էր մեզի. նոյնպէս Վարչութիւնը կը հրաւիրուէր հսկելու

յանձնաժողովին աշխատութեանց : Յառաջ  
կը յայտարարենք թէ յանձնաժողովը ան-  
յաջողութեան մատնուած է : Եթէ այս վի-  
ճակը շարունակէ ազգին շահերը պիտի  
վնասուին , մենք իրաց տխուր վիճակը  
տեսնելով մեր առաջարկը գրաւորապէս  
բերած ենք , կը խնդրենք որ ժողովը զայն  
նկատի առնի :

ԱՏԵՆ. ԷՖ. — Նախ քուէի կը դնեմ  
թէ սկզբունքով այս ժողովը պէտք է  
զբաղի այս խնդրով թէ երեսփոխանները  
իրենց անհատական հանգամանքով պէտք  
է զբաղին :

Հ. ԽՕՃԱՍՍՐԵԱՆ ԷՖ. — Դիւանը ի-  
րաւունք չունի արգիլել ժողովին՝ վիճա-  
բանելու այս խնդրոյն վրայ , երբ սկզբ-  
բունքը ընդունուած է այս ժողովէն շատ  
որոշ կերպով եւ վարչութեան յանձնա-  
բարութիւններ եղած են , վարչութիւնը  
խնդիրը հոս բերած է , հետեւաբար ժո-  
ղովը պէտք է քննէ այս արգիւնքն եւ ո-  
րոշէ իր հետեւելիք ուղղութիւնը կամ  
վարչութեան ընելիք իր թելադրութիւն-  
ները : Դիւանին կողմէ առաջարկուած  
փակուած պատշաճ չեմ տեսներ :

ԱՏԵՆ. ԷՖ. — Արդէն ես ալ առաջարկ  
մըն է որ կը ներկայացնեմ , ժողովը կրնայ  
մերժել :

Պ. ՓԱՓԱՋԵԱՆ ԷՖ. — Դիւանը իր  
տանձնը կ'անցնի . ինք իրաւասութիւն  
չունի նախաձեռնող մը ո եւ է խնդիր մեր-  
ժելու առաջարկ բերելու :

Այս ժողովը սկիզբէն կամ պէտք  
չէր զբաղէր Օսմ. Խորհրդարանի անդամոց  
ընտրութեան խնդրով , եւ կամ պէտք է  
այժմ շարունակէ վիճաբանութիւնները ,  
Մինչդեռ մենք իւրացուցած ենք խնդիրը  
եւ պարտք դրած ենք վարչութեան վրայ  
վերին հսկողութիւնը ի գործ դնելու :  
վարչութիւնը իր համարատուութիւնը կը

բերէ , ինչպէս փակել կ'ուզէք ուրեմն  
խնդիրը , երբ ընդունած ենք սկզբունքը :

Ռ. ՉԱՐԴԱՐԵԱՆ ԷՖ. — Թէեւ խնդիրը  
Ազգ. ժողովին բերուած է , բայց բա-  
նաձեւերը քուէարկուած են մեծա-  
մասնութիւն չեղած նիստերու մէջ . եւ  
իբր բաղձանք յանձնուած վարչութեան .  
եթէ խնդիրը հոս յուզենք եւ Ազգ. ժո-  
ղովը ընտրական պայքարին մէջ մասնակց  
խնդիր ընէ Իթիհատի կամ Իթիլաֆի  
կողմը անցնելու , փափուկ դիրքի մէջ կը  
մտնէ : Այս տեսակ խնդիր մը այժմ  
կուսակցական , քաղաքական խնդիր մը  
չկրնար իւրացնել այս ժողովը , Ասոր հետ  
մէկտեղ խնդիրը այն ատեն պէտք է  
վիճուի , երբ օրակարգի անցնի եւ որոշ-  
ուի թէ այս ժողովը ձեռնհաս է ասով  
զբաղելու :

Դ. Տ. ՄՈՎՍԷՍԵԱՆ ԷՖ. — Սկզբունքը  
այս ժողովը ընդունեց եւ երկու բանաձեւ  
ունի այս մասին : Առարկուեցաւ որ եթէ  
անպատճառ այս խնդիրը նկատի առնել  
կ'ուզուի , պէտք է օրակարգ անցնի : Ժո-  
ղովը եթէ հարկ տեսնայ օրակարգ կ'ան-  
ցնէ , բայց ժողովը զիւանական գործո-  
ղութեանց կարգին որոշումներ ալ կրնայ  
տալ : Գարահան էֆ.ի տեղեկագրին վրայ  
սրբազրութիւն մը ունիմ : Տեղեկագիրը  
կ'եզրակացնէ թէ յանձնաժողովի վերջին  
նիստին կեդրոնը եւ Ռամկավարները  
չներկայացան : Ես կը ներկայանայի ըն-  
կերներովս : Հո՛ն , ինչպէս առջի նիստին  
մէջ պաշտօնապէս յայտարարեցի թէ ին-  
չո՛ւ չենք մասնակցիր Յանձնաժողովին  
նիստերուն : Որովհետեւ Յանձնաժողովը  
սկզբունք դրեր է որ իր պաշտօնը կը կա-  
յանայ միւրիւր այս կամ այն կուսակցու-  
թեան յարկուն մէջ , մինչդեռ մենք այս  
սկզբունքը չէինք ընդուններ , կ'ուզէինք  
որ հայ երեսփոխաններու մասին խոր-  
հրդակցէինք : Ազգ. ժողովը ազգին կա-  
րեւոր մէկ իրաւունքը չկրնար անտեսել  
եւ ես երբեք իր օրինաւոր աշխատութեանց

կարգին արգիլք չեմ տեսներ : Օսմ. երես-  
փոխանական ընտրութեանց մէջ Հայերուն  
մասնակցութիւնը ինչ պիտի ըլլայ . մին-  
չեւ ո՞ւր կրնան իրենց խորհուրդը , բաղ-  
ձանքը պաշտօնական հանգամանքները  
մղել . ասիկա ճշդել երեսփոխանութեան  
պարտքն է : Կ'առաջարկեմ որ Ազգ. ժո-  
ղովը պաշտօն յանձնէ որ իբր գործադիր  
իշխանութեան պետ եւ իբրեւ միջնորդ  
կառավարութեան եւ ազգին , իր հարկ  
դատած կերպով պէտք եղած միջոցները  
ձեռք առնէ եւ դիմումներ կատարէ , որ-  
պէս ի պահպանուին ազգին իրաւունք-  
նքը :

ՉԱՅՆԵՐ. — Այսինքն Պատրիարքը բա-  
նակցի՞ Իթիհատին կամ Իթիլաֆին հետ :

Ա. ՎՈՍՄԵԱՆ ԷՖ. — Կը տեսնամ որ  
մարդիկ կան այս ժողովին մէջ , որ կ'ու-  
զեն մղել Ազգ. ժողովը իրեն չվերարե-  
րած գործերուն խառնուելու : Կը հասկնամ  
որ Ազգ. ժողովը զբաղի Ազգ. Սահմա-  
նադրութեամբ գծուած բարեգործական ,  
կրթական եւ նմանօրինակ խնդիրներով ,  
բայց անիկա ձեռնհաս չէ օսմանեան հայ  
քաղաքացիի ընտրական իրաւունքին մի-  
ջամտելու...

ՏՐ. Գ. ՃԷԼԱԼ ԷՖ. — (Ընդմիջելով)  
Ատիկայ կառավարութեան տեսակէտն է ,  
զուք կառավարութեան կողմէ՞ կը խօ-  
սիք :

Ա. ՎՈՍՄԵԱՆ ԷՖ. — (Շարունակելով)  
Գաւառական ընդհ. ժողովները հաւասար  
իրաւունքներ կը վայելին այս ժողովին  
հետ , իրենց թեմական նմանօրինակ գոր-  
ծերուն մէջ : Յիշեցէք որ այս ժողովը  
նոյն իսկ իրաւունք չունի գաւառի մը ա-  
ռաջնորդը կամ վանքի մը վանահայրը  
ընտրելու . ինչպէս կ'ուզէք որ նոյն գա-  
ւառին համար օսմանեան երեսփոխաններ  
որոշէ , Այդպիսի յաւակնութիւն մը Ազգ.  
Սահմանադրութեան ոգին եւ աստին հա-

կառակ է : Վարչութիւնը այդպիսի տեղե-  
կագիր-առաջարկ մը բերելով՝ իրաւագան-  
ցութիւն մը գործած է : Եթէ Ազգ. ժո-  
ղովը , նոյնիսկ մեծամասնութեամբ գու-  
մարուած նիստի մը մէջ այդպիսի հակա-  
սահմանադրական որոշում մը ընէ , մենք  
Դաշնակցականներս ինքզինքնիս պարտա-  
ւոր չենք նկատել համակերպիլ ասոր :  
Դաշնակցականներուս փափաքն է , այո՛ ,  
որ Ազգ. ժողովը համազգային ըլլայ ա-  
ւելի լայն իրաւասութիւններով , բայց այն  
ատեն միայն՝ երբ Ազգ. Սահմանադրու-  
թիւնը վերաքննուի , Ազգ. ժողովը իրա-  
պէս ընդհանուր ազգին ներկայացուցիչն  
ըլլայ եւ թերեւս այն ատեն իրաւունք ալ  
ունենայ օսմանեան երեսփոխաններու  
թեկնածուներ որոշելու : Բայց կը յիշէք  
հարկաւ որ այս ժողովը Սահմանադրու-  
թեան վերաքննութիւնն անգամ չընդու-  
նեց : Եթէ ըլլար այնպիսի խնդիր մը , որ  
մեր հիմնական շահերուն վնասէր եւ իւ-  
րաքանչիւր երեսփոխանի խղճին եւ իր  
քաղաքական համոզումներուն սպառնար ,  
այսպիսի յիշատակական վայրկեաններու  
մէջ , այս ժողովը կրնայ բան մը ընել ,  
ինչպէս Օսման բաշայի զէմ ամէն երեսփո-  
խան միանամուռ բողոքեց : Սակայն այսօր  
պարագան նոյնը չէ : Սովորական քաղա-  
քացիական պարտականութեան մը առջեւ  
կը գտնուինք : Դ. Տէր Մովսէսեան էֆ.  
կ'ուզէ որ Պատրիարքը ստանայ ազգին  
մեծամասնութեան կարծիքը . շատ լու-  
բայց հոս չէ ազգին մեծամասնութիւնը .  
եթէ Պատրիարքը հնարաւորութիւն ունե-  
նայ 2 1/2 միլիոն տաճկահայութեան մե-  
ծամասնութեան կարծիքը ստանալ , ասոր  
ըսելիք չունիմ : Բայց այս ժողովին մէջ  
չկայ այն մեծամասնութիւնը զոր կը յա-  
ւակնի ունենալ կեդրոնը , որուն շարքերը  
կը լայննան ու կը նեղնան՝ ըստ պարա-  
գայից : Կը զարմանամ որ երեսփոխանի մը  
հրաժարականը ընդունելու համար նա-  
խաքննութեան գիւաններուն կը դիմէք .  
իսկ այսպիսի ծանր եւ ժողովին իրաւա-  
սութեան վերաբերող խնդիր մը , հապճե-

պով եւ պակասուոր ժողովի մը մէջ վերջացնել կ'ուզէք: Այս ժողովին մէջ գտնուած հայ հատուածը եւ դուքսի հայ հատուածը համերաշխութեան չկրցան դալ, այս ըսել չէ սակայն թէ հայը համերաշխ չէ:

Կ'եզրակացնեմ որ Վարչութիւնը իրաւունք չունէր մեզ հոս զբաղեցնել այս խնդրով, քանի որ այս ժողովը անձեռնհաս է օսմ. երեսփ. ընտրութեան խնդրին մէջ: Եւ դիւանն ալ պէտք չէր որ սեղանի վրայ դնէր այդ կարգի խնդիր մը, որովհետեւ այդ պարագային պէտք կ'ըլլայ վերաքննել Սահմանադրութիւնը:

ԱՏԵՆ. ԷՖ. — Երկու կարծիք կայ. առաջինը Տ. Մովսէսեան ԷՖ.ի, այսինքն Ս. Պատրիարքը այս գործին միջամտէ եւ ազգային շահերը պաշտպանէ եւ երկրորդ կարծիք Վռամեան ԷՖ.ի թէ Ազգ. Սահմանադրութեան իրաւասութենէն դուրս է այս տեսակ խնդիր մը:

Հ. ԽՕՃՍՍՍՐԵԱՆ ԷՖ. — Նախ կը զարմանամ որ այս խնդրով զբաղելու համար մտավարկութիւն ցոյց կը տրուի: Պ. Վռամեան այս ժողովին իրաւունքը սահմանափակեց այն աստիճան որ կարելի չէ աչքէ վրիպեցնել, ինք Ազգ. Ժողովին իրաւասութիւնները անձկացուց, անձկացուց, բայց տիրացուական ժողով մըն է չըսու. չնորհակալ ըլլանք որ կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու չափ իրաւունք մը չնորհեց: Այս ժողովը ազգին միակ հեղինակաւոր մարմինն է, ազգին միակ ներկայացուցիչն է. մէկ Հայն ամէնուն եւ ամէն Հայ մէկուն. այս է Սահմանադրութեան ոգին. այս ժողովը կը զբաղի հայկական խնդրով, բոնականութեանց, հարստահարութեանց խնդրով. երբ Օսման բաշա այնքան անարդար յարձակումներ րբաւ Դաշնակցութեան դէմ, այս ժողովը էր որ իր ցասումը յայտնեց. ասոնք տիրացուական խնդիրներ չեն, ազգին գոյութեան հարցերն են, եւ այս ժողովը է որ կը ստանձնէ գանձը:

Այս ժողովը երբ իրաւունք ունի Հայոց պետին՝ Կաթողիկոսին՝ ընտրութեան խնդրոյն միջամտելու, կարծեմ աւելորդ է ըսել թէ կրնայ նաեւ միջամտել այս խնդրոյն: Այս ժողովը ընտրական գործէ շատ աւելի կարեւոր խնդիրներով զբաղեցաւ: Համարի ժամանակ՝ կրթական եւն. խնդիրներու լուծման սահմանուած այս ժողովը, զբաղեցաւ քաղաքական ամենամեծ գործով, հայկական դէպքերով, հարստահարութեանց խնդրով եւ բողոքներ ալ մատուցուեցան: Սակայն կը տեսնեմ թէ ինչ որ կառավարութիւնը պիտի ուզէր անել, ազատական անունով մեզ ներկայացողներն որ կ'ընեն: Եթէ կառավարութիւնը պարտաւորութիւն մը դնէր հոս, ասկէ աւելի պիտի չսահմանափակէր այս ժողովին իրաւասութիւնը: Դիտուութիւն եղաւ թէ ընտրութիւնը քաղաքական իրաւունք մըն է եւ ժողովը քաղաքական իրաւունքներու միջամտելու իրաւասութիւն չունի: Ատիկա ըստ երեւոյթին միայն ճիշդ է: Այս ժողովը թելադրութիւն չընէր այս կամ այն երեսփոխանն ընտրելու: Պէտք է ապահովել սակայն մեր թուական համեմատութեամբ Բ. կարգի ընտրողներ: Հարիւրաւոր Բ. կարգի ընտրողներուն մէջ աննշան թիւ մը տրուած է մեզի, եւ մեր երեսփոխաններն Օսմանին, Մէհմէտին քուէով միայն կրնան ընտրուիլ. ճիշդ այս տեսակէտով է որ կը զգրի քաղաքական խնդիր ըլլալէ եւ կ'ըլլայ ազգային հեղինակութեան խնդիր, քանի որ կառավարութիւնը չկրնար առանց քրիստոնեայի Խորհրդարան ունենալ: Ազգ. Ժողովը՝ Վարչութեան վերին հսկողի դեր մը տուաւ եւ շատ գոհ պիտի ըլլայինք եթէ իր դերը կատարած ըլլար: Ազգ. Ժողովը կրնայ ըսել թէ իմ իրաւասութենէն դուրս է, այն ատեն Վարչութեան վրայ պիտի մնայ գործը եւ Վարչութիւնը կը սպասէ մեր հրահանգներուն: Կարգախօս մը պէտք է որուն պիտի հետեւի գաւառը: Խորհրդարանական ընտրութեանց առթիւ սարսափելի մտավարկութիւն մը կայ, ինչպէս

յայտնուեցաւ նախորդ նիստին: «Ազգին տունը կը կործանէք կոր» ազաղակեցին: Սահմանադրական ընտրութիւն մը պիտի կատարուի եւ մէջտեղն երկու կուսակցութիւն կայ. Իթիբակաւ եւ Իթիլաֆ, որ զազունի ընկերութիւններ չեն, տէրութենէն պաշտօնապէս վաւերացած են եւ օրինաւ որ հողի վրայ, առանց դաւադրական ընկերակցութեան հանգամանքը ունենալու, պարզապէս կը մղեն. ասկէ մենք վախնալու ի՞նչ պատճառ ունինք, չեմ կրնար ըմբռնել ուրեմն որ մարդ ելր Իթիլաֆին ինչպատ խօսի, ինչո՞ւ կը բռնանան, ինչո՞ւ ձայնը խեղդել կ'ուզեն: Երբ Համարի օրով անգամ չդադրեցանք բողոքելէ, մտավարկութեան տակ պիտի տանք այսօր մեր քուէները: Ընտրական խնդրոյն մէջ ազգին միակ հեղինակաւոր մարմինը պէտք է ուղղութիւն մը իրեն ճշգէ որ ազգին տարիներէ ի վեր հետապնդած քաղաքականութեան յարմար ըլլայ: Անցեալ նիստին Սարգիս ԷՖ. Էսմէրեան ըսաւ թէ, «ազգին տունը կը քանդէք կոր, այս խընդիրը հոս բերելով», Այս բառերը Սահմանադրութեան ուղղուած նախատինքներն են: Եթէ կ'ապրինք Սահմանադրական շրջանի մը մէջ, եթէ ունինք ազատ խօսելու իրաւունք մը, եթէ քաղաքացիներ ենք, այն ատեն ի՞նչ պատճառ ունինք վախնալու: Ես մէպուսներու քանակը կամ անձը չէ որ խնդրոյ առարկայ պիտի ընեմ: Միակ թէ պէտք է այս ժողովը որոշէ թէ ինք քաղաքականութիւն մը ունի, որուն ճշգուտը հարկաւոր է: Եւ զարմանալի է, խօսեմութեան, զգուշութեան յորդորները կուգան անոնցմէ որ ազատական ըլլալէ աւելի բան մը՝ Հայ Յեղափոխականներ են... Կ'առաջարկեմ որ Ազգ. Ժողովը ինչպէս անցեալին մէջ, այս անգամ ալ ինք ստանձնէ այս խընդիրը, պաշտօնապէս թէ անպաշտօն: Այս ժողովը էր որ չորս տարի առաջ իր կամբը յայտնեց երբ Զօհրապ ԷՖ.ի ընտրութեան դէմ արգելք հանուելուն համար Պատրիարքն ազգու թագրիբով մը դիմեց կա-

ռավարութեան եւ ըսաւ. «Եթէ Զօհրապ ԷՖ.ի ընտրութիւնը չի յաջողի, ո՛չ մէկ հայ երեսփոխան պիտի մասնակցի Խորհրդարանին»: Երբ նոյն իսկ սպառնալիք ալ ըրեր ենք այն ատեն, ի՞նչ պիտի ըլլան այսօրուան վարկաւոր, լալկան ձեւերը:

Ես կ'առաջարկեմ որ Ս. Պատրիարքն հրաւիրէ երեսփոխաններն անպաշտօն կերպով որ կազմեն չորս տարի առաջուան մարմինը, ընտրական պայքարին մէջ ազգին ուղղութիւնը ճշգրտու համար, վասն զի յանուն ազգին խօսելու իրաւունքը միայն Ազգ. Ժողովինն է:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ. — Երեսփոխաններէն կը խնդրէի որ մասնաւոր հաշիւներով չի զբաղուին: Նկատի առնելով մեր գտնուած վիճակը, ազգային գործերուն ներկայ կացութիւնը եւ բոլորին նշանակութիւնը, կը տեսնուի թէ մենք զուրկ ենք որոշ թաքթիք եւ վայրկեանի պատմական նշանակութեան համաձայն շարժելու ընդունակութենէն եւ կարողութենէն: Եթէ մենք ամէն մէկը իր ձեռքը խղճին վրայ դնէ, պիտի խոստովանի թէ երբ այս տեսակ խնդիրներ այստեղ կուգան՝ ժողովը բուն եռանդ ցոյց կուտայ, մինչ օրակարգին վրայ գտնուած ոչ ուրեւի կենսական հարցեր, որոնք լուծուի մը կը սպասեն, փոշիներու տակ թաղուած կը մնան եւ նոյն կրակոտ կիրքը չենք դնիր դուրս հանելու գանձք եւ ամէն նիստի ժամանակ կը վատնենք հարցումներով եւ հարցապնդումներով: Ես երբեք չէի ցանկար որ ընտրական սա փափուկ հարցը զրուէր այս ժողովին առջեւ, սակայն շատ լաւ գիտեմ որ իմ ձայնս անլսելի պիտի մնայ, ինչպէս ուրիշ անգամներ եղած է: Ես չէի ուզեր որ այստեղ այնպիսի որոշումներ տրուէին զորս ապագայ եւ ո՛չ թէ անցեալ պատմութիւնը այս ժողովին իրաւասութենէն վեր նկատէր: Դիտեցէ՛ք անգամ մը թէ որո՞նք են հարցը այստեղը բերողները: Արգեօք ազգային շահերը պաշտպանելու համար է

որ կը բերուի այս հարցը այստեղ : Չեմ հաւատար : Խօսածսարեան էֆ. իրաւամբ դիտել տուաւ թէ հին ընթացք մէջ իսկ այս ժողովը քաղաքական հարցերով զբաղած է . սակայն պէտք չէ մոռնալ թէ այս ժողովը զբաղած ըլլալուն համար էր որ երեք հարիւր հազար զոհեր տուինք : Վասն զի այն ատեն ալ չկրցանք ըմբռնել պատմական բոլորէն նշանակութիւնը եւ կարեւորութիւնը : Հիմայ լաւ խորհինք : Ես ամենայն սիրով համամիտ կ'ըլլայի որ մէտոսական ընտրութեան հարցը հոս բերուէր եթէ բերողները մէտոս ըլլալու փափաքով տողորուած չըլլային ամէնէն առաջ, եւ հարցը կայանար ազգին գոյութիւնը պաշտպանելուն մէջ : Մենք հոս բուն կերպով կը վիճարանինք եւ նոր երկպառակութիւններ առաջ կը բերենք, փոխանակ իրարու հետ միանալու եւ համախումբ գործելու, եւ այն ատեն նշանակութիւն չգիտի ունենար մեր թուրք քաղաքական կուսակցութիւններէն մէկուն ի թիւհատին կամ ի թիւաֆին յարիւր, քանի որ ամէն ալ նոյն հոգեբանութիւնը ունին : Քաղաքական պայքար մղելու մեր ընտրած եղանակը սխալ է : Խնայեցէք ազգին : Պատմութիւնը մենէ համար պիտի պահանջէ եւ մենք մեր սխալներն է որ միայն ցոյց պիտի տանք, այսպէս միայն անձնական նկատումներու զոհելով ազգին շահերը : Քաղաքական պայքարներ այսպէս չմղենք, մեղք է այս ազգին եւ միանանք ու մէկ սիրտ եւ մէկ հոգի գործենք :

ԱՏԵՆ. ԷՖ. — Թեր ու դէմ խօսուածները լսեցիք, ժողովականք լուսարանուեցան անչո շա խնդրոյն վրայ, հետեւաբար նախ եւ առաջ վիճարանութեան փակումը ձեր քուէին կ'ենթարկեմ :

(Ատենապետ էֆ. քուէի գնելով վիճարանութեան փակումը, ժողովը մեծամասնութեամբ որոշեց փակել վիճարանութիւնը) :

ԱՏԵՆ. ԷՖ. — Քանի որ վիճարանութեան փակումը ժողովը որոշեց, ձեր քուէին կ'ենթարկեմ երկու առաջարկները : Վաւերան էֆ. կ'ըսէ թէ Ազգ. ժողովը անձեռնհաս է այս խնդրոյն միջամտելու, իսկ հակառակ կողմը իր առաջարկը ամփոփած է հետեւեալ բանաձեւին մէջ :

(Ատենապետ էֆ. կարդաց հետեւեալը) :

Օսմ. երեսփոխանական ընտրութեանց առթիւ ժողովու վարչութեան յայտարարութիւններն եւ առ այդ բերած առաջարկները լսելէ վերջ, նկատելով որ ընտրութիւնները մօտալուտ են, որով անմիջական գործողութեանց այլեւս հարկ անհրաժեշտ է սկսիլ, եւ նկատելով որ Ա. Պատրիարքն իրեւ գործադիր իշխանութեան պետ կառավարութեան եւ ազգին յարաբերութեանց միակ միջնորդն է, ժողովու կ'որոշէ Ն. Սրբազնութեան յանձնել որ ազգին փափաքանաց վերահասու ըլլալէ վերջը զօրեղապէս ձեռք առնէ ամէն միջոց եւ ապահովէ թրքահայոց թիւին համեմատութեամբ հայ երեսփոխաններու ընտրութիւնները, ջանալով որ ընտրուած երեսփոխանները հայ ազգին ներկայացուցին ըլլալու հանգամանքն ունենան :

Դ. Տեր Մովսէսեան  
Հայկ Խօհասարեան  
Ա. Սուրի

ԱՏԵՆ. ԷՖ. — Նախ եւ առաջ ձեր քուէին կ'ենթարկեմ այս բանաձեւը, յետոյ Վաւերան էֆ. առաջարկը քուէի ենթարկելու համար :

(Ատենապետ էֆ. քուէի գնելով սոյն բանաձեւը ստացաւ 26 քուէ) :

ԱՏԵՆ. ԷՖ. — Հակափորձը կատարելէ յետոյ, անոնք որ Վաւերան էֆ. ի բանաձեւը կ'ընդունին պիտի տան իրենց քուէները :

Ա. ՎՈՒՄՆԵՍՆ ԷՖ. — Այս ժողովը իրաւունք չունի այսպիսի ծանրակշիւ հարցի մը մասին քուէարկութիւն կատարելու :

Ռ. ՉԱՐԴԱՐԵՍՆ ԷՖ. — Դուք Պատրիարքը շատ փափուկ կացութեան մէջ կը դնէք. ան կառավարութեան հետ է որ եք շանակցի իբր Պատրիարք. բայց այժմ կառավարութիւնը չէ որ ընտրութիւնները կը վարէ այլ ի թիւհատ եւ ի թիւաֆ կուսակցութիւնները :

Ուրեմն դուք կը ստիպէք որ Պատրիարքը հայ ազգին անունով ի թիւհատին կամ ի թիւաֆին դիմէ եւ ենթարկուի ալ անոնց. կ'ըմբռնէք արդեօք թէ ի՞նչ հետեւանքի կը նսնի այդ ձեռնարկը. Պատրիարքը իր չէզոքութեան հանգամանքէն դուրս կ'ելլէ այդպէսով : Ուրեմն անհրաժեշտ է որ Պատրիարքը կարծիքն ալ առնենք, թէ կ'ուզէ՞ այդպիսի պաշտօն մը եւ անոր հետեւանք եղող պատասխանատուութիւնը ստանձնել :

Վ. ԹԷԻԷՍՆ ԷՖ. — Կառավարութիւնը ընտրութեանց մէջ ո'ր աստիճան չէզոք դիրք որ կը բռնէ այսօր, նոյն ձեւով չէզոքութիւն մըն ալ թող մեր Պատրիարքը բռնէ :

Ռ. ՉԱՐԴԱՐԵՍՆ ԷՖ. — Բայց կառավարութիւնը պաշտօնապէս չէ՞ որ կը միջամտէ ընտրութեանց, մինչդեռ հոս դուք պաշտօնական պարտաւորութիւն կը դնէք Պատրիարքին վրայ, որ ազգին անունով ի թիւհատին կամ ի թիւաֆեան ըլլայ :

ԱՏԵՆ. ԷՖ. — Անհրաժեշտ է նախ Ա. Նախագահին կամքն իմանալ. խօսքը ձերն է, Սրբազան :

ՆԱԽԱԳԱՀ Ս. — Դուք իմ վրաս կ'ուզէք դնել նոր պարտաւորութիւն մը, բայց ո'ր օրէնքի եւ ո'ր արամադրութեան համաձայն կը դնէք զայն : Յիշուեցաւ թէ Ազգ. Սահմանադրութեան օրինական որոշ արամադրութեամբ Պատրիարքը միջնորդն է ազգին եւ պետութեան : Իսկ ձեր դրած այդ նոր պարտաւորութիւնը եւ սուած նոր պաշտօնը ո'ր օրէնքով է : Ասիկայ զիս փօս քօզիսիօնի մէջ պնել է : Ես տարբեր ոգով չեմ ըսեր այս խօսքերը : Ես կ'ուզէի գործնական միջամտութիւն մը ընել այս խնդրոյն, բայց միջոցն է որ կը պակսի :

Լ. ՍԵՂՅՈՍԵԱՆ ԷՖ. — Տէ՛, պատասխան տուէք, ի՞նչ ըսելիք ունիք :

ՆԱԽԱԳԱՀ Ս. — Ներեցէք որ այս ժամուս ստիպուած եմ մեկնելու, ոռւտական դեպքանին ողջերթի երթալու համար :

ՉԱՅՆԵՐ. — Սրբազան, կեցիք որ եզրակացութեան մը յանգինք :

ԱՏԵՆ. ԷՖ. — Ա. Պատրիարքին այս բացարձակ յայտարարութիւններէն ետք, խնդիրը կը փոխուի : Պատրիարքը կը յայտարարէ թէ՛ Ազգ. Սահմանադրութեան մէջ ո եւ է արամադրութիւն չկայ որ պարտաւորցնէ զինքը այդպիսի բանաձեւ մը ընդունիլ եւ գործադրել :

Դ. Տ. ՄՈՎՍԷՍԵԱՆ ԷՖ. — Մենք պարտաւոր չենք Ա. Պատրիարքին այս յայտարարութեան ազդուել, դուք բուէարկութիւնը ամբողջացուցէք. ժողովը կ'ընդունի կամ կը մերժէ մեր բանաձեւը, ինք գիտէ. բայց եթէ ընդունի, գիւտնին կը մնայ բանաձեւը հաղորդել գործադիր իշխանութեան, իբր Նախագահը անսաստէ կը հրամարի :

Ա. ԱԼՊՅՍՏԵԱՆ ԷՖ. — Ձեր տուած

բացատրութիւնները դիւանին կողմէ արբուելիք բացատրութիւններ չեն: Դուք պէտք է քուէարկութեան արդիւնքը հաղորդէք ու մեր տալիք որոշումը գրաւորապէս ներկայացնէք: Ս. Պատրիարքին որ Սահմանադրութեան հակառակ կէտեր նշմարելու պարագային, ետ դարձնէ ժողովին վերաքննութեան համար:

Լ. ՍԵՂՈՍԵԱՆ ԷՖ. — Այս բարեկամ, բայց օրինական որոշում մը չկայ մէջտեղ, ժողովը օրինաւորապէս բացուած չէ տակաւին եւ նոյն իսկ բանաձեւին քուէարկութիւնը չվերջացաւ:

Մ. ՀԱՅԿԱԶՆ ԷՖ. — 71ի մեծամասնութիւն պահանջուած ժողովի մը մէջ 26 քուէն մեծամասնութիւն չկրնար համարուիլ:

Ա. ՎՌԱՄԵԱՆ ԷՖ. — Ազգ. ժողովը իրաւասութիւն ունի՞ միթէ Սահմանադրութեան արամադրութիւններէն դուրս գործերու միջամտելու: Դիւանը նախ այս կէտը պէտք է որոշէ եւ եթէ ոչ պէտք է հրաժարի:

Ռ. ԶԱՐԴԱՐԵԱՆ ԷՖ. — Ենթադրենք վայրկեան մը թէ ատենական գործողութեանց մէջ բանաձեւեր կրնան ընդունուիլ եւ իբր բաղձանք ներկայացուիլ վար-

չութեան, բայց այժմ խնդիրը փոխուած է. Ս. Պատրիարքը հակասահմանադրական կը նկատէ ներկայացուած բանաձեւը. եւ այդպիսի ծանրակշիւ խնդիր մը միայն 71 երեսփոխանի մեծամասնութեամբ նիստի մէջ կրնայ տրուիլ: Կը խնդրենք ատենապետէն իր պարտքը կատարել:

ԱՏԵՆ. ԷՖ. — Ես արդէն ըսած էի թէ այս խնդիրը երեսփոխաններուն անձնական հանգամանքին հետ միայն առնչութիւն ունի, բայց ժողովը ուղեց զբաղիլ այս խնդրով: Արդ՝ Ս. Պատրիարք Հօր յայտարարութիւնը խնդիրը փոխեց, եւ նկատելով որ այդպիսի առարկելի բանաձեւ մը չի կրնար մեծամասնութիւն չունեցող նիստի մը մէջ վիճարանութեան զրուիլ եւ քուէարկուիլ, ես, իբր ատենապետ, պարտք կը սեպեմ այդ խնդիրը փակուած հռչակել:

(Ժողովը պահ մը աղմկալի վիճակ ստանալով Ատենապետ ԷՖ. տասը վայրկեանի դադար տուաւ, բայց օրակարգի անցնելու համար օրինական մեծամասնութիւն չգոյանալով նոյն միջոցին, Ատենապետ ԷՖ. ատենը վերաբանալէ յետոյ այս պարագան հաղորդեց ժողովին եւ ատենը փակեց ժամը 4 1/2ին):

Ատենադպիր Ատենապետ Մ. ՆԱԹԱՆԵԱՆ Հ. ԱՍԱՏՈՒՐ



# ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

## ԲԱՅՈՒՄ 1911 — 1912 ՆՍՏԱՇՐՋԱՆԻ

### ՆԻՍՏ Լ.

13 Ապրիլ 1912

Ն Ա Խ Ա Գ Ա Հ. — ՍՐԲԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ ՀԱՅՐ  
Ա Տ Ե Ն Ա Պ Ե Տ. — ՄԱՆՈՒԿ ԷՖԷՆՏԻ ԱԶԱՐԵԱՆ

### Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. — Մեծամասնութեան խնդիր:
2. — Տեղեկագիր Ասեմապետաց Դիւանի ի մասին Երուսաղէմի Պատրիարքական ընտրութեան:
3. — Ընտրուիլն խորհրդարանական յանձնաժողովոյ, Երեցեան Սրբազանի մասին կասարելի քննութեան:
4. — Տեղեկագիր Ասեմապետաց Դիւանի ի մասին Օրմանեան Սրբազանի ամբաստնութեանց:
5. — Տեղեկագիր Ասեմապետաց Դիւանի ի մասին Թբիսիոյ կողմէ Ամենայն Հայոց Հայրապետի մասուցանելի գրին:
6. — Խնդիր Եուանեսուի:

(Ատենը բացուեցաւ ի ներկայութեան 50 երեսփոխանաց, որոց թիւը յետոյ յանգեցաւ 66ի):

ԲԱՑԱԿԱՅՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՍՓՈՒՍԱՆՑ ՅԱԻԱԿՑԱԿԱՆ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ

ԱՏԵՆ. ԷՖ. — Նորատունկեան, Շահրիկեան, Ռ. Մարտիկեան, Մ. Շիրինեան եւ Երկանեան ԷՖ.ները այսօրուան նիս-

ԱՏԵՆ. ԷՖ. — Ցաւալի պարտականութիւն մը պիտի կատարենք այսօր: Տաւաթամ կորսնցուցինք մեր պաշտօնակից-



ներէն Յակոբ էֆ. Փափագեանը, որ անուղործելի հիւանդութեան մը զո՛ւ շնաց իբր մէկ շարժ առաջ: Մեր ամենէն երիտասարդ ընկերն էր հանգուցեալը և իր մէկը սպասուէր իրաւամբ ազգային ծառայութիւններ: Կը հրաւիրեմ Ս. Նախագահը որ օրհնէ հանգուցելոյն յիշատակը:

(Երեսփոխանք յօանկայս, Ս. Պատրիարքարտասանեց «Հոգոց հանգուցելոց» աղօթքը):

ԲՕՅԱԿԱՅՈՒԹԻՒՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆԱՅ

ԱՏԵՆ. ԷՖ. — Անցեալ նիստին արուած որոշման համաձայն, Մայր Դիւանս պատրաստած է յաջորդաբար ժողովոյ նիստերէն բացակայ գտնուող երեսփոխանաց մէկ ցուցակը: Ահաւասիկ այդ ցուցակը:

1. — Գարրիէլ Եպսկ. Ճէվահիրճեան՝ երեք անգամէ ի վեր բացակայ առանց բանաւոր պատճառի:
2. — Յուսիկ Քհնյ. Բաշունի՝ նոյնպէս:
3. — Տիրան էֆէնտի Կիւմի շկերտան՝ նոյնպէս:
4. — Հեթում էֆ. Սէթեան՝ ճամբորդութեամբ բացակայ:
5. — Համբարձում էֆ. Պոյաճեան՝ ճամբորդութեան պատճառաւ բացակայ:
6. — Միրզա էֆ. Մարեան՝ նոյնպէս:
7. — Գարեգին էֆ. Փաստրմաճեան՝ առանց պատճառը հաղորդելու երեք անգամ բացակայ:
8. — Բարսեղ էֆ. Աւետիսեան՝ նոյնպէս:
9. — Վարդգէս էֆ. Սէրէնկիւիւսան՝ ճամբորդութեամբ բացակայ:
10. — Աստուր էֆ. Ժամկոչեան՝ 29 Հոկտեմբեր 1911 թուակիր նամակով հաղորդած է իր բացակայութիւնը և վերադառնալու խոստում տուած:

11. — Գեղամ էֆ. Տ Կարապետեան՝ ճամբորդութեամբ բացակայ:
12. — Ղեւոնդ էֆ Մելոյեան՝ պաշտօնով բացակայ:
13. — Արտաշէս էֆ. Յովսէփեան՝ նոյնպէս:
14. — Աբրահամ էֆ. Հայրիկեան՝ առանց բանաւոր պատճառի երեք անգամէ ի վեր բացակայ:
15. — Ժագ էֆ Սայապալեան՝ ազգային պաշտօնով բացակայ:
16. — Գարրիէլ էֆ. Նորատուկեան՝ ճամբորդութեամբ բացակայ:
17. — Մկրտիչ էֆ. Մելիքեան՝ հիւանդութեան պատճառաւ բացակայ:
18. — Զարեհ էֆ. Տիւպեր՝ առանց բանաւոր պատճառ հաղորդելու 3 անգամէ ի վեր բացակայ:

Ասոնցմէ երեք անգամ բացակայ գրանուողներուն այս անգամ կոչնագիր պիտի զրկուի եւ եթէ յաջորդ նիստին անպատասխանի մնայ պիտի դադրին ժողովականութենէ:

Մ. ՀԱՅԿԱԶՆ ԷՖ. — Ասկէ առաջ անդի ունեցածին նման Մայր Դիւանը կրնայ զադրեցնել այժմէն՝ կանոնի հակառակ բացակայութիւն ունեցող երեսփոխանները:

ԱՏԵՆ. ԷՖ. — Կանոնին մէջ կոչնագիր զրկելու արամազրութիւն կայ: Ինչպէս կ'երեւայ այդ արամազրութիւնը դրուած է, որպէս զի կարելի ըլլայ ճշգրէթէ բացակայողները ո եւ է օրինաւոր պատճառ պիտի կրնան ներկայացնել: Առանց ատոր կարելի չէ դադարեալ հրոշակել ո եւ է երեսփոխան:

Հ. ԱՐԱՄԵԱՆՅ ԷՖ. — Մելոյեան էֆ. պաշտօնով կը բացակայի իսկ Ժամկոչեան էֆ. հաղորդած էր որ ձմեռը չգիտի կրնայ զալ:

ԱՏԵՆ. ԷՖ. — Գարունը եկած է այլ եւս կը յուսանք որ իր վերադարձը կարելի կ'ըլլայ: Իսկ Մելոյեան էֆ. ի համար ի՞նչ կը խորհի ժողովը:

Վ. ԹԷՔԷՆԱՆ ԷՖ. — Պէտք է գիր գրուի իրեն եւ հարցուի իր բացակայութեան պատճառը, եւ եթէ չկրնայ զալ իր տեղը ուրիշ մը կ'ընարուի:

Ե. ՍՐՄԱՔԷՇԽԱՆԼԵԱՆ ԷՖ. — Միրզա Մսերեան էֆ. նամակով մը կ'իմացնէ ինձ թէ, ինք արդէն հրաժարագիր զրկած է Ազգ. Ժողովին եւ կը խնդրէ որ իր տեղը արժանաւոր մէկը ընարուի:

ԱՏԵՆ. ԷՖ. — Այդ նամակին վաւերականութեան մասին խօսք չունինք, բայց այդպիսի կողմնակի միջոցներով հրաժարական ընդունելու դրութիւնը՝ բնաւ կանոնի համաձայն չէ. աւելի լաւ կ'ըլլայ որ ըստ ներքին կանոնագրի Մսերեան էֆ. դադրի երեսփոխանութենէ, իր մշտնջենական բացակայութեան և. Պոլսէն հեռու գտնուելուն պատճառաւ, քանի որ իր հրաժարագիրը չունինք ի ձեռին:

Հ. ԽՕՃԱՍՍՐԵԱՆ ԷՖ. — Դիւանին վրայ պարտք դրուած է որ բացակայ երեսփոխաններու համար օրէնքը դորձադրուի եւ անոնք որ բանաւոր պատճառաւ իրենց բացակայութիւնը չեն կրնար հաստատել, հրաժարեալ նկատուին:

ՀԱՐՅՈՒՄ ԵՐԵՍՓՈՒՍԱՆԱՅ

ԱՏԵՆ. ԷՖ. — Տասը երեսփոխաններու կողմէ հարցում մը կայ, կը յանձնեմ ժողովիդ ուշադրութեան:

(Ատենադպիր էֆ. կարդաց հետեւեալ գիրը):

Վսեմաշուք Ատենապետ էֆէնտի Ազգ. Երեսփ. Ընդ. Ժողովոյ Անցեալ նստին մէջ երեսփոխան Սար-

գիս էֆ. Էսմէրեան գրութիւն մը կարդաց Ազգ. Ժողովին մէջ եւ զայն ժողովոյ անուանեց, իսկ երբ հարցուեցաւ իրեն թէ որու ստորագրութիւնը կը կրէ, որոշ կերպիւ բան մը չկրնալով ըսել կակաղելով պատասխանեց թէ ստորագրութիւն չի կար տակը, մինչդեռ ինքը այն սեփական պարագայի մէջ կարդաց նոյն գրութիւնը որով հասկցնել կ'ուզէր թէ Տ. Գէորգ եպս. Երէցեան գրած է զայն:

Արդ նկատելով որ Տ. Գէորգ Եպ. Երէցեան ընտրուած եւ ընտրութիւնը վաւերացեալ երեսփոխան մըն է, եւ ուրիշ երեսփոխանի մը կողմէ իբր ժողովանի կ'ամբաստանուի, կը պահանջենք որ Էսմէրեան էֆ. յատենի ժողովի յայտնէ:

1. — Ուրկի՞ց գտած է այդ ժողովանը:
2. — Կրնա՞յ հաստատել անոր վաւերականութիւնը:
3. — Որո՞ւ ստորագրութիւնը կը կրէ այդ, որպէսզի մենք եւ բոլոր ժողովը վերահասու ըլլայ եւ խղճեմքն իս հանգարտի:
4. — Եթէ չի կարենայ հաստատել Էսմէրեան էֆ. իր այդ ամբաստանութիւնը, զինքը դատաստանի տակ առնել իբր զըրպարտիչ եւ ըստ այնմ անօրինել զարժանը:

- |                    |               |
|--------------------|---------------|
| Մ. Եպսկ. Տերուկեան | Յ. Մոսիսեան   |
| Տօֆ. Թիւլեան       | Յ. Էսաբեան    |
| Հ. Արամեանց        | Յ. Պեյազեան   |
| Եզնիկ Մ Վ. Պապեան  | Յ. Ճանկիւլեան |
| Ամբաս Բիւրաս       | Օ. Տերուկեան  |
- 11 Մարտ 1912

Ս. ԷՍՄԷՐԵԱՆ ԷՖ. — Իմ յիշած գիրս, որուն ժողովոյ հանգամանքը չեն կրնար հերքել նոյն իսկ այս հարցման ներքեւ ստորագրող երեսփոխանները, կը գտնուի ծանօթ սնտուկին մէջ եւ ես տեսած եմ: Անոր վաւերականութիւնը անտարակուսելի է. զի այդ սնտուկին մէջ գոյութիւնը, անոր վաւերականութեան նշանն է, իսկ ստորագրութիւնները ճշգրելու հա-

մար, կը խնդրեմ որ միջոց տաք, յաջորդ նիստին կրնամ ներկայացնել:

Ե. ՊԷՅԱԶՃԵԱՆ ԷՖ. — Պէտք է պատասխանէ թէ որո՞ւ ստորագրութիւնը կը կրէ այդ ժուրնալը, պէտք է ճշդուի գոնէ այս կէտը:

Ս. ԷՍՄԷՐԵԱՆ ԷՖ. — Մնաուկը հոս է, ի վայրկեանի մէջ ալ կրնայ բերուիլ:

ՏՐ. Ն. ԹԻԻԼԵԱՆ ԷՖ. — Ժամ մըն ալ միջոց կուտանք:

ԱՏԵՆ. ԷՖ. — Եթէ պահ մը վերջ կըրնաք բերել, գացէք բերէք:

Ս. ԷՍՄԷՐԵԱՆ ԷՖ. — Դժբաղդաբար բանալիները քովս չեն այդ պատճառաւ ժողովէն մինչեւ յաջորդ նիստ միջոց ու զեցի:

ՏՐ Ս. ԹԷՐԶԵԱՆ ԷՖ. — Օրինական կէտ մը կայ որ պէտք չէ ուշադրութիւնէ վրիպեցնել. օրէնքը Պատրիարքի եւ վարչութեան անդամներու ամբաստանութեան մասին տրամադրութիւններ ունի, բայց ո եւ է ժողովականի մասին յօդուած չկայ, միայն գծուար չէ հասկնալը որ նմանօրինակ պարագայի մէջ ալ քննութիւն կը կատարուի, միայն թէ երբ ամբաստանողները չկարենան հաստատել իրենց ամբաստանութիւնը, հրապարակաւ պիտի կրեն իրենց պատիժը:

Հ. ԽՕՃԱՍՍՐԵԱՆ ԷՖ. — Ես կը կարծեմ որ ընտրուած ձեւը ճիշդ չէ: Այսօր նկատողութեան առնուածը միջանկեալ խնդիր մըն է, մինչդեռ Էսմէրեան էֆ. իբրեւ յայտնի ամբաստանող ներկայացած է արդէն, հետեւաբար այդ ամբաստանութեան քննութեան համար պէտք է կազմուի յանձնաժողովը եւ իր եզրակացութիւնը բերէ, որպէս զի խնդիրը գոնէ իր օրինաւ որ լուծումը: Ես այս միջանկեալ

խնդիրները յարուցանելով, ընդհանուր խնդրէն անջատելու կողմը չեմ, ու կ'առաջարկեմ՝ քանի որ ամբաստանութիւն մը կայ մէջտեղը, յանձնաժողով մը կազմուի ընտելու համար զայն:

Ե. ՊԷՅԱԶՃԵԱՆ ԷՖ. — Այս խնդիրը օրակարգի առաջին խնդիր էր, երրորդ խնդիր եղաւ, ինչ պատճառաւ չեմ գիտեր: Միայն սա գիտեմ որ ո եւ է Էսմէրեան չկրնար մահուան վճիռ արտասանել Երէցեան Ս.ի դէմ, եթէ այդ եկեղեցականը լրտես է թող վտարուի եկեղեցականութենէ, ապա թէ ոչ, հրապարակաւ ներողութիւն խնդրենք իրմ:

ԱՏԵՆ. ԷՖ. — Արդէն օրակարգի մէջ կը գտնուի այդ խնդիրը...

Ե. ՊԷՅԱԶՃԵԱՆ ԷՖ. — Առաջին խնդիր էր երրորդ խնդիր եղաւ:

ԱՏԵՆ. ԷՖ. — Աւելի ստիպողական խնդիր երեւան եկած ըլլալուն համար, բայց եթէ ժողովը այս խնդրոյն ստիպողութիւն կուտայ առաջին խնդիր կ'ընենք. զիւանս այս կամ այն խնդիրը յետաձգելու ոչ բաղձանք ունի ոչ նպատակ:

ՆՈՐ ԳԻԻՂԻ ՀԱՆՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԱՏԵՆ. ԷՖ. — Նիկոմիդիոյ վիճակէն Մեծ Նոր Գիւղէ վաւերացեալ եւ բազմաստորագիր հանրագրութիւն մը կայ, կը յանձնեմ ժողովիդ ուշադրութեան:

(Ատենադպիր էֆ. կարգաց հետեւեալ գիրը)

Վսեմաշուք Ատենապետ էֆ.

Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովոյ Պատրիարքարանի վերակազմութեան պատրուակին տակ Պատրիարքին հեղի-

նակութիւնը չէզոքացնելու, Պատրիարքութիւնը աշխարհականացնելու համար եղած ձեռնարկին դէմ եւ ասոնց հետեւանքը եղող ազգային եւ կրօնական առանձնաշնորհմանց վտանգուածը նկատի առնելով՝ յանուն Ազգ. Սահմանադրութեան եւ կրօնի խափաւ կը բողոքեմք եւ ի հարկին գործնականապէս պիտի պաշտպանեմք ազգին գոյութիւնը ապահովող բոլոր սկզբունքներն ու կարգերը՝ ընդդէմ քայքայիչ սոսնձութեանց:

Բազմաթիւ ստորագրութիւնք Մեծ Նոր Գիւղ. 13 Մարտ 1912

Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ ԷՖ. — Պէտք է շարժուի վարչութեան:

